# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***Արարատի մարզի Արարատի տրավերտինիհանքավայրի Գորովան տեղամասի հանքի փակման աշխատանքների շրջակա վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2026 թվականի մարտի 20-ին՝ ժամը 12:00-ին Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ՍԹՈՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արարատի մարզի Արարատի տրավերտինի հանքավայրի Գորովան տեղամասի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի ներկայացուցիչները, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարը և աշխատակիցները, ազդակիր բնակավայրերի բնակիչները և շահագրգիռ հանրությունը:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «բ». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի, թրթռման և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը:

**Ներկայացուցիչ** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ բնապահպանական միջոցառումների իրականացմամբ դրանք կհասցվեն նվազագույնի:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց նախատեսվող գործունեության տարածքի առկա վիճակի վերաբերյալ:

**Նեկայացուցիչը** պատասխանեց որ ամբողջ տարացքը 59130մ$^2$ է, որից 4073մ$^2$ մակերեսով տարածքի պաշարները ամբողջությամբ մարված են, 3970 մ$^2$ տարածքում պաշարները մասնակի են մարված, արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել՝ 51087 մ$^2$ տարածքում որը ներառում է նաև մասնակի մարված հատվածը:

**Նախատսվող** գործունեությունը մասնակիցների կողմից արժանացավ համայնքում հավանության:

Այլ հարցեր չհնչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ՍԹՈՈՒՆ» ՓԲԸ-ի տնօրեն /ներկայացուցիչ՝ Հ. Սաֆարյան